



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 սեպտեմբերի 2013 թ. № 188 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի № 146-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ *հրամայում եմ*.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող երիտասարդական միջոցառումների անցկացման համար կատարվող ծախսերի չափերը հաստատելու մասին» № 146-Ա/1 հրամանի (այսուհետ՝ Հրաման) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հրամանի հավելվածի աղյուսակի 1-ին կետի երկրորդ սյունյակի «3000» և «5000» թվերը փոխարինել «Հավասարեցվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» № 2335-Ն որոշմամբ սահմանված չափերին» բառերով:

2. Հրամանի հավելվածի աղյուսակի 5-րդ կետի ա), գ), դ) ենթակետերի երկրորդ սյունյակի «ամսական 66.200» բառերը փոխարինել «Հավասարեցվում է գործող ամսական նվազագույն աշխատավածի չափին» բառերով:

3. Հրամանի հավելվածի աղյուսակի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 6.	Տպագրական ծախսեր՝ ա) ծալաթերթի (բուկլետ) պատրաստում, ձևավորում	1 հատը 250 դրամ
	բ) գունավոր (նվազագույնը 3 գույն) ծալաթերթի պատրաստում,	մեկ հատը մինչև 8000 դրամ

ձևավորում (առավելագույնը 12 թերթ) հրավիրատոմսի պատրաստում	1 հատը 800 դրամ
պատվոգրեր, հավաստագրեր, վկայականներ	1 հատը 500 դրամ
վկայագիր (դիպլոմ)՝ շրջանակով	1 հատը 2000 դրամ
պաստառ	1 քմ՝ մինչև 6000 դրամ

»:




ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ